

Ո Ր Ո Վ Ա Ծ Մ Ն Ա Ժ Ե Ղ Մ Ր Ո Վ Ե Թ Ր Ո Մ Ե Ծ Ո Ի Ն, Ե. I, տժիլոսնո, 1975, 227 թՅ., Ե. II, տժիլոսնո, 1976, 287 թՅ.

Ի Լ Յ Ա Ա Ք Ո Ւ Լ Ա Ձ Ն, Ա շ խ ա տ ու թ յ ու ն ն Ե ր, հ ա տ. 1, Թ Բ Ի Լ Ի ս Ի, 1975, 227 էջ, հ ա տ. 2, Թ Բ Ի Լ Ի ս Ի, 1976, 287 էջ:

Պրոֆ. Ի. Արուլաձեն լայն ճանաչում ունեցող հայագետ-վրացագետ էր, բնագրագետ ու լեզվաբան. բառարանագիր ու հնագրագետ: Շուրջ քառասնամյա գիտական-մանկավարժական գործունեության ընթացքում նա հրապարակել է մի քանի տասնյակ հոդվածներ ու մենագրություններ, երևան բերել միջնադարյան մատենագրության նոր բնագրեր ու խմբագրություններ: Գիտա-կազմակերպչական առումով աս ՎՍՍՀ ԳԱ ակադ. Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի հիմնադիր-տնօրենը նշանակալի երախտիք ունի: Հոգածու ուսուցչի խորհրդով ու հսկողությամբ ինստիտուտում պատմա-բանասիրական պատրաստություն ստացան և մատենագրության նոր բնագավառների ուսումնասիրությամբ են զբաղվում բազմաթիվ վրացագետներ:

Անվանի գիտնականի մահվանից շատ շանջած, ինստիտուտը ձեռնամուխ եղավ նրա գիտական ժառանգության հատոր առ հատոր հրատարակման գործին: 1973 թ. լույս տեսավ նրա «Հին վրացերեն լեզվի բառարանը»¹, վերահրատարակվեց «Վրաց գրչության նմուշներ» վավերագիր ժողովածուն, իսկ 1975 թ. ձեռնարկվել է Ի. Արուլաձեի «Աշխատությունների» հրատարակությունը, որ ամփոփում է նրա տպագիր ու անտիպ ուսումնասիրությունները: Վրացաբան-հայագետի գրեթե բոլոր աշխատությունները հայագիտական խնդիրների արժարժումներ են բովանդակում, ուստի նրանց հրատարակությունը կամ վերահրատարակությունը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հայոց լեզվի ու մատենագրության պատմությամբ զբաղվող մասնագետների համար: «Աշխատությունների» առաջին հատորում ամփոփված են «Վրաց-հայկական բանասիրական հետազոտություններ» ընդհանուր խորագիրը կրող հոդվածները, որոնց մասնական հրապարակումն սկսվել էր 1936 թ.: Հոդվածաշարը, փաստորեն,

ամբողջանում է իբրև մենագրություն՝ «Ճառընտիրի» որոշ գլուխների աղբյուրները» ենթախորագրով: «Հայսամավորքների», «Ճաշոցների», «Հարանց վարքերի» նման «Ճառընտիրները» ևս (վրաց.՝ «Մրավալթավի») բարդ կառուցվածք, բազմաշերտ ներառումներ և ալյազան աղբյուրներից քաղված նյութերի համագրում-ժողովածուներ են, որոնց հետազոտությամբ շահագրգռված է ազգային ու թարգմանական մատենագրության հարցերով զբաղվող մասնագետը: Եվրոպական արևելագիտությունը ևս քրիստոնյա Արևելքի ժողովուրդների ստեղծած «Ճառընտիրների» հանդեպ լայն հետաքրքրություն է ցուցաբերում: Այդ փաստի արտահայտությունն էր բելգիացի արևելագետ Մ. վան էսբրուեի հիրավի ընդգրկուն և շահեկան գրքի երևան գալը²:

«Ճառընտիր» մուծված բնագրերը, հիմնականում, ղերծ են հետագա մշակում-հավելումներից, ուստի առավել հետաքրքրական՝ վաղ շրջանի (գերազանցապես մինչև X դար) մատենագրության հարցեր ուսումնասիրելու համար: Հոդվածաշարի ներածական մասում Ի. Արուլաձեն իրավացիորեն նշում էր, թե քննարկվող ժողովածուի նյութերը թարգմանության ժամանակին, աղբյուրին ու թարգմանչի ինքնությանը վերաբերող հիշատակարաններ չունեն, հետևաբար «միակ միջոցը առկա հուշարձանների համեմատությունն է այլ լեզուներով պահպանված համանման բնագրերի հետ»: Ինչ վերաբերում է գիտնականի նպատակադրմանը, ապա նա ֆնեում է վրաց «Մրավալթավի» այն դրվագները, որոնք քաղված են հայերենից կամ հակառակը՝ վրացերենից հայերեն: Թե՛ հայկական, թե՛ վրացական բնագրերը քննելիս Ի. Արուլաձեն հաճախ հարկադրված է դիմել ձեռագիր ժողովածուներին՝ դրանով իսկ հրատարակելով կամ հրատարակության նախապատրաստելով այդ հուշարձանները: Բանա-

¹ Գրախոսությունը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 1, էջ 242—245:

² Michel van Esbroeck, Les plus anciens Homéliers georgiens, Louvain, 1975.

սիրական-աղբյուրագիտական աշխատանքի առավել բարդ տեսակներից մեկը լեզվաոճական, բառագանձային քննության միջոցով բնագիր-թարգմանություն հարաբերության ճշտումն է, որից բխելու են պատմա-մշակութային կարևոր եզրակացություններ: Ուրախությամբ պիտի խոստովանել, որ Ի. Արուստանյան Ն. Մառից, Պ. Պետերսից ու Կ. Կեկելիձեից հետո հայ-վրացական բնագրագիտական աշխատանքի ամենահեղինակավոր իրականացնողն է, արդարև նրանց գործի շարունակողը:

Առաջին հոդվածը նվիրված է «Վկայաբանություն սրբոյն Փիլիկտիմոնի» և «Յիշատակ սրբոյն Սարգսի» վարքագրական երկերի վրացերեն և հայերեն բնագրերի համադրական ուսումնասիրությանը: Հայերենի «յորդոթենէ անտի արեանցն» արտահայտության դիմաց վրացերենն ունի յայտա ժատ ժատալտալտա (այսինքն «նաբանէ անտի արանցն»), որից ակնհայտ է, թե «Յիշատակ սրբոյն Սարգսի» երկի թարգմանիչը բնագրի յորդոթիմ-ը ընթերցել է իբրև աղագրություն, իսկ առեանց-ը՝ առանց: Այս ու նման կովաններով գիտնականը անվերապահորեն հավաստում է իր եզրակացությունը: Նույնը վերաբերում է և մյուս հուշարձանին, ուր հայերեն սուրբ «սուրբ» է ընկալված, ցեղեկը՝ «երեկ»: Ի դեպ, բնագրագիտական իր քննությունները Ի. Արուստանյան օժտում էր հազվագեպ գործածություն ունեցող բառերի, ընդհանուր բառագանձի և այլ բառացանկերով, որոնք մեծ նպաստ են բերում և բառարանագրությանը: Արժարժեղ թարգմանության ժամանակի հարցը, հեղինակը ելնում է հայ-վրացական մատենագրական, մշակութային մերձության ն. Մառի ու Կ. Կեկելիձեի պարբերացումից, երկու հուշարձանի թարգմանությունն էլ VIII—IX դդ. նախորդող շրջանով թվագրելով:

«Պատմություն վարուց սրբոյն Եկելեայ աղախնոյ» երկը հայերենի է թարգմանվել V դարում, ինչպես գիտել են Ն. Բյուզանդացին և Ն. Ակինյանը: Ի. Արուստանյան գրչագիր ճառընտիրներում գտնում է այս հուշարձանի երկու հին վրացական խմբագրություն և պարզում, որ վաղագույնը առնչվում է հայերենին (առկա են մի քանի գրչական վրիպումներ՝ յաւնէ-այր, խոռվորեամբ-խորամանկութեամբ, որբոց-սրբոց և այլն): Գիտնականը հայերենի միջոցով վերահասկում է վրացերենի կրած ազդեցությունները և ուղղում դրանք: Պարզվում է, որ վրացերենի արձագանքը նկատելի է Շուշանիկի և Եվստաթեոս Մցխեթացու վկայաբանություններում, հետևաբար քննարկվող հուշարձանը ուղագրավ է և աղբյուրագիտական առումով: Հայերեն և վրացերեն բնագրերի համադրական ուսումնասիրությունը հնարավորություն է տա-

լիս ճշգրտելու մի քանի սակավ գործածական տերմինների նշանակությունը («գուգ», յօճօ, յօՅՅՅ, ԵՅՅՅՅ, ՆՅՅՅՅ(Յ) և այլն):

Դատելով արձագանքներից, Թեկլեի վկայաբանությունը հայ-վրացական եկեղեցական-մշակութային միության շրջանի թարգմանություն է, կատարված, հավանաբար, Ստորին Քարթլիում (Քվեմո Քարթլի): Ի. Արուստանյան ուսումնասիրությունն ավարտում է վրացերեն ու հայերեն բնագրերի հրատարակությամբ ու վերջինիս կցված շահեկան բառարանով (էջ 45—90):

Նույն եղանակով ու նույնքան համակողմանիորեն է ուսումնասիրված «Վկայաբանություն սրբոց Բառասուն վկայիցն» երկը, որի երկու վրացերեն խմբագրությունները անկախաբար ու տարածամանակ հայերենից են թարգմանված (V—VIII դդ.): Այս հուշարձանը ևս ծանոթ է եղել Եվստաթեոս Մցխեթացու և Աթո Տփղիսացու վարքերի հեղինակներին: Հայկաբանությունները բացահայտելուց և բառագանձային քննություն կատարելուց հետո Ի. Արուստանյան հրատարակում է վրացերեն երկու խմբագրությունների ու հայերենի գիտական բնագրերը (էջ 103—124):

Սեբրիոս Գաբաղովնացու մատենագրական ժառանգության հին վրացերեն թարգմանություններն ու դրանք բովանդակող ձեռագիր «Ճառընտիրները» համառոտակի ներկայացնելուց հետո հաջորդ հոդվածում Ի. Արուստանյան հետազոտում է հեղինակի «Վասն առաքելոց» ճառը: Վերջինս նախորդի հետ միևնույն դարերի շրջանակում կատարված թարգմանություն է: Հայերեն բնագրի վերահրատարակությունը ակնհայտ է դարձնում վրացերենի լեզվաոճական մի քանի առանձնահատկությունները:

«Վկայաբանություն Աղբիանուի և Անատոլեայ» ընդարձակ երկի հայերեն թարգմանության ժամանակի ու բնագրի հարցերը մինչև Ի. Արուստանյանի հրատարակությունը ճշգրտված չէին: Վրացերեն կիմենյան (նախատիպ, պարզունակ) խմբագրության նոր տարբերակի ուսումնասիրությունը բազմաթիվ ուղագրավ հարցադրումների հնարավորություն է ստեղծում: Վրաց-հայկական ընդհանուր գործածություն ունեցող տասնյակ բառերից զատ հայերենում կան և այնպիսի բառեր ու բառաբարդություններ, որոնք վրացերեն բնագրի առկայությունն են հուշում (կին մարդ— ԾԵԾԵԾԵԾ, այր մարդ— ԾԵԾԵԾԵԾԵԾ): Փորձառու գիտնականը վերապահությամբ է հանգում այս եզրակացության և արդարացիորեն նկատում, թե զարմանալու ոչինչ չկա, եթե վրացերենը հայերենի բնագիրը լինի (էջ 155): Խնդիրը բավականաչափ բարդանում է նրանով, որ հայերենի նենգու բառի դիմաց

վրացերենում զարշահուտ ունենք, իսկ այս պարագան բառի -ոտ վերջավորությունը հուտ ընկալելու հետևանք կարող է լինել: Եթե Ի. Աբուլաձեի ենթադրությունը ստույգ է, ապա հուշարձանիս հայերեն թարգմանությունը կատարված պիտի լինի վիրահայոց շրջանում, ուր վրացերենի ազդեցությամբ կին մարդ (հմմտ. բարբառային կնիկմարդ) և այլ մարդ ընկալումները առանին պիտի լինեին: Համենայն դեպս, մինչև VIII դարը հայերենից վրացերեն կամ վրացերենից հայերեն թարգմանված այս երկը նոր հետազոտությունների դուռ է բացում: V—VIII դդ. ևս վրացերենից հայերեն թարգմանելու հնարավորությունը չի բացառվում: Տեղին է հիշել Սեդրեստրոսի վարքի թարգմանության հիշատակարանի այն վկայությունը, թե ներսեհ վրաց իշխանի հրամանով է այն կատարվել՝ Գրիգոր Զորոփորեցու կողմից 678 թ. (արժարժվող վկայաբանության բնագրերի հրատ. տե՛ս նշվ. աշխ., էջ 162—208):

Հոգվածաշարի քննարկած 7-րդ և 8-րդ հուշարձանները Հովհան Ոսկեբերանի գործերն են՝ «Վասն պահոց...» և «Լ տատրակն...»:

«Ճառնտիրներում», անշուշտ, կան այլ դրվագներ ևս, որոնք հայ-վրացական մատենագրական առնչակցության վաղ շրջանի արդյունքներ են, սակայն գիտնականի անժամանակ մահը, ցավոք, կանխեց նրանց ուսումնասիրությունը: Բայց Ի. Աբուլաձեի կատարածը այնքան նշանակալի է և ուսանելի, որ այդ գործը երբևէ իր շարունակողը պիտի գտնի, մանավանդ որ՝ հայերեն թարգմանական վարքագրության ուսումնասիրության վիճակը այսօր հեռու է գոհացուցիչ լինելուց: Ապագայում հայ-վրացական խմբագրությունների ֆննդությունից բխող եզրակացությունները մեծապես նպաստավոր են լինելու այդ նույն գործերի ասորեբեն, հունարեն և արաբերեն խմբագրություններն ուսումնասիրելիս:

1950-ական թթ. սկսած պրոֆ. Ի. Աբուլաձեի հրատարակում էր «Հին վրացերենի բառագանձից», «Հնձենավորի բառագանձից» և «Վրացերենի և հայերենի ընդհանուր գործածության բառեր» խորագրերն ունեցող հոգվածաշարեր, որոնք ի մի են հավաքված գիտնականի «Աշխատությունների» 2-րդ հատորում: Այստեղ առաջարկվող ստուգաբանություն-քննությունները գերազանցապես տեքստաբանական վկայությունների ուղեկցությամբ են կատարվում: Նշված պարագան, ինչ խոսք, պատմա-բանասիրական կարևորություն է տալիս բառ-տերմինների հետ կապված խնդիրներին: Այսպես, օրինակ, հայ. գուսառ և վրաց. გოვარო > გუարო (տոհմ, ցեղ, «պզ») տերմինների ուսումնասիրությունից ակնհիշ է դառնում տոհմական

հանրության և նրա զբաղեցրած տարածքի անմիջական աղերսը, մանավանդ որ տերմինը վրացերենի ճանապարհով է անցել հայերենին: Որոշ դեպքերում արժարժվող տերմինները նույնական ծագում չունեն, բայց ունեն կազմության ու իմաստի զարգացման ընդհանրություն, ինչպիսին են վրաց. სავუთარი-ն (սեփական) և հայ. յատուկ (հմմտ. չլլլլլ — հատանել): Հայերեն ամբոխ, գոհ, ուսմիկ, շինական տերմինների օգնությամբ Ի. Աբուլաձեի ճշգրտում է վրացերենի ջլլլլլ-ի սկզբնական նշանակությունն ու փաստական իմաստը: Ոչ պակաս համոզիչ ու համակողմանի է ժալո—ծնծա—ծծծծառո (պար, երգ, երգեցիկ) բառի ուսումնասիրությունը, որով պարզվում է և հայ. ուլլլ բառի ստուգաբանությունը (*ծան): Նույն սկզբունքով ու մանրամասնությամբ քննված ու ներկայացված են ժոտալլլլ, ვაჰჰანო, არშებო, მხეჯვალი, ქორეკობი և ქორეპისკოპოსი տերմինները, որոնց մեծ մասը իրենց համապատասխանությունն ունի հայերենում:

«Հնձենավորի» բառագանձից 12 միավոր է ուսումնասիրված երկրորդ հոգվածաշարում, դարձյալ հայերեն բնագրերի լայն ընդգրկումով (էջ 60—101): Երրորդ բաժինը հայ-վրացական ընդհանուր գործածություն ունեցող բառերին է հատկացված, ուր հմտորեն վերլուծված են հայ. փուլ (քուայ), պաշտ, վանդակ, դրոշմ, հիւս, շիշ, ձայն, սպուղեայ, ձեղուն, պինչ, ուղիղ, փապար բառերը (էջ 102—140): Լեզվաբանական բնույթ ունեն և հաջորդ մի քանի հոգվածները՝ «Գրչության արվեստի հետ կապված մի քանի հին վրացական տերմիններ», «Վրացական բայի հազվագյուտ ձևեր ըստ VIII—X դարերի հուշարձանների», «Վրաց «Բաղավարականի» մի կերպարի անվան ծագման շուրջ»:

Հատորի մեջ ամփոփված մի քանի աշխատություններ արժարժում են վրաց-հայկական բանասիրության խնդիրներ: «Վրաց քերականական մատենագրության վաղ հուշարձաններ» ուսումնասիրությունը նվիրված է Զուրաբ Շանշովանի (Շանշոյանի) կազմած «Քերականությանը», որ փաստորեն Սիմեոն Զուղայեցու «Գիրք, որ կոչի քերականութիւն...» աշխատության թարգմանությունն է, վրացերեն լեզվի նորմերին համապատասխանեցնելու մասնական փորձերով: «Քերականությանը» Շանշովանին ձեռնամուխ է եղել 1735 թ., գործելով Վախուշտիի սատարմամբ: Սուլխան-Սաբա Օրբելիանի «Բառգրոց» հայերեն աղբյուրների վերհանմանն է վերաբերում հաջորդ հոգվածը (էջ 188—205): Թվարկելով միջնադարյան հայկական բառարանագրության հիմնական հուշարձանները, Ի. Աբուլաձեի Ս.-Ս. Օրբելիանի աշխատության աղբյուրներից է համարում «Բառգիրք հայոցի»

(«Բառք քերթողականք») ընդարձակ տարրերակեր, Ոսկան երևանցու հրատարակած Աստվածաշնչի վերջում եղած հատուկ անվանց մեկնությունը և այլ ցանկեր, որոնց արձագանքը կարելի է գտնել և վրացերեն Աստվածաշնչի Սարայի խմբագրության մեջ:

Երկրորդ հատորում եղած միակ «գուտ վրացագիտական» հոդվածը «Ընձենավորի» XVI դարին վերաբերող հնագույն պատառիկի ուսումնասիրություն-հրապարակումն է (էջ 206—219), իսկ հաջորդ երկու հոդվածները դարձյալ վրաց-հայկական բանասիրության բնագավառից են. մեկում Մ. Անդրոնիկաշվիլու աշխատության գրախոսության առիթով կատարված դիտողություն-դիտարկումներն են ամփոփված, մյուսում՝ «Վարք հարանցի» առանձին հրվագների բննությունը: Գիտնականն այստեղ հանդում է կարևոր եղրակացության. IX—X դդ. Տալր-կղարջում վրացերենից հայերեն են թարգմանվել «Հարանց վարք» մուծված առանձին երկեր, որոնք ունեն թե՛ տեքստաբանական և թե՛ մշակութային հետաքրքրություն:

Ընդհանուր կովկասագիտական հնչեղություն ունեն աղվանական այբուբենի հայտնաբերմանն ու «Յաղագս... իւղոյն» տեքստին վերաբերող համառոտ հաղորդումները (էջ 238—245): Ի. Աբուլաձեին է պատկանում հայերեն ձեռագրում (Մաշտոցի անվան Մատենադարան, № 7117) աղվանական գրերը վերագտնելու և գիտական հասարակայնության ուշադրությանն առաջարկելու անժխտելի պատիվը:

«Աշխատությունների» երկրորդ գրքի կազմողները ճիշտ են վարվել՝ վերջում հրապարակելով պրոֆ. Ի. Աբուլաձեի անտիպ հոդվածները, որոնք թեև կարոտ են որոշ լրացման ու մասնավորեցման, բայց միաժամանակ՝ արժանի գիտական շրջանառության մեջ դրվելու: Դրանք

հիմնականում բառաբնություններ են՝ ճոճը-ցո-դղեակ, թաճը-մաճ, մսձանել (?), թաշը-յո-մակոյկ, Նոյալու-սլտուլ, ծըծը-գգուել, լըճաճո-ուղեշ, ճաճաճո-ջատապոյ և այլն: Այս բաժնում վրացերեն թարգմանությամբ գետեզված են և այն հոդվածները, որ հանգուցյալ դիտնականը ժամանակին հրատարակել էր Հայաստանի գիտական հանդեսներում: Երանցից հատկապես նշանավոր է «X դարի վրացերեն մի ձեռագրի հայերեն հիշատակագրությունները և նրանց նշանակությունը հայ բարբառագիտության համար» հոդվածը², որ ուշագրավ նյութ է ներկայացվում:

Դժվար չէ նկատել, որ Ի. Աբուլաձեի «Աշխատությունների» առկա երկու հատորների հրատարակությունը, անվանի գիտնականի ժառանգությունը ներկայացնելուց բացի, մեծապես նպաստելու է հայ-վրացական բանասիրության զարգացմանը, շատ հաճախ մեթոդական ու փաստական ձեռնարկ դառնալով: Ի. Աբուլաձեն հետազոտում էր անշտապ ու հանգամանորեն, բացառապես գիտական մղումներով, և նրա եզրակացությունները արդարացի հեղինակություն են վայելում հայրենական ու արտասահմանյան գիտական շրջանակներում:

Արժանին պիտի հատուցել հատորները լուսապատճենմամբ հրատարակելու նախաձեռնության հեղինակներին ու իրացնողներին: Ափսոս, սակայն, որ գրքերը լույս են տեսել առանց բառացանկերի ու վրիպակների ուղղման, որոնց առկայությունը կոյուրացներ մասնագետ ընթերցողի գործը:

Յ Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 4, Երևան, 1958, էջ 35—42:

Պ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

AGATHANGELOS, *History of the Armenians*, translation and commentary by R. W. Thomson, Albany, State University of New York Press, 1976, 527 p.

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Հայոց պատմություն, թարգմանություն և ծանոթագրություններ Ռ. Թոմսոնի, Ալբանի, Նյու Յորքի պետական համալսարան, 1976, 527 էջ:

Միջնադարյան հայ մատենագրության ոչ մի երկ իր ժամանակին այնպիսի տարածում չի ունեցել, ինչպես V դարի հայ մատենագրության գոհարներից Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը»¹: Գեոևս VI դարում այս «Պատ-

մությունը» թարգմանվել է հունարենի², որի շնորհիվ մուտք է գործել տարբեր երկրների Հունարենից են թարգմանված արարելեն³, յա-

¹ «Ագաթանգեղայ Պատմություն Հայոց», աշխ. Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, էջմիածին—Տիֆլիս, 1909:

² G. Lafontaine, *La version grecque ancienne du livre arménien d'Agathange*, Louvain, 1973.

³ Ա. Տեր-Ղևոնդյան, Ագաթանգեղոսի արարական նոր խմբագրությունը, Երևան, 1968: